Ավտոբուս» ՓԲԸ տնօրեն Բ.Կիրակոսյանի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 0501 2026թ-ի թիվ ԵԱ18 պարտադիր կատարման ցուցումն անվավեր ճանաչելու պահանջի շրջանակներում, որը ներառում է նախնական խորհրդատվությունը, հայցադիմումի և անհրաժեշտ այլ փաստաթղթերի կազմումը և ներկայացումը, դատական գործի շրջանակներում Պատվիրատուի իրավունքների պաշտպանությունը:

Պայմանագրի 2.1. կետի համաձայն՝ պայմանագրի գինը կազմում է 450.000 ՀՀ դրամ, որը Պատվիրատուն պարտավորվում է վճարել հայցադիմումը վարույթ ընդունվելուց հետո 5-օրյա ժամկետում՝ Կատարողի «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունում բացված 2052122192451001 հաշվեհամարին:

Վերը նշված դիրքորոշման լույսի ներքո հաշվի առնելով սույն գործով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը, գործի բարդությունը և պահանջվող փաստաբանական վճարի չափերի հարաբերակցությունը համադրելով գործում առկա՝ կողմերի միջև կնքված պայմանագրով սահմանված վճարման ենթակա գումարի չափի հետ գտնում է, որ հայցվորի կողմից ներկայացված փաստաբանի խելամիտ վարձատրության գումարի բռնագանձման պահանջն ենթակա է բավարարման մասնակիորեն, և որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումարի չափ է համարում 200.000 ՀՀ դրամը, ուստի «Երևանի Ավտոբուս» ՓԲԸ-ից հօգուտ ԱՁ Ռիտա Արմենի Գասպարյանի ենթակա է բռնագանձման 200.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար, իսկ մնացած մասով դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 362-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. ԱՁ Ռիտա Արմենի Գասպարյանի հայցն ընդդեմ «Երևանի Ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության՝ ԱՁ Ռիտա Արմենի Գասպարյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

1.1. Անվավեր ճանաչել «Երևանի Ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Բ.Կիրակոսյանի կողմից 05.01.2026 թվականին կայացված ԱՁ Ռիտա Արմենի Գասպարյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ ԵԱ08 ցուցումը:

2. «Երևանի Ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերությունից հօգուտ ԱՁ Ռիտա Արմենի Գասպարյանի բռնագանձել 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. «Երևանի Ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերությունից հօգուտ ԱՁ Ռիտա Արմենի Գասպարյանի բռնագանձել 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

4. Դատական ծախսերի, այդ թվում՝ պետական տուրքի հարցը մնացած մասով համարել լուծված:

5. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և հրապարակման պահից մեկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

ԴԱՏԱՎՈՐ **Ռ.Մ.ԲՈՒՆԻԱԹՅԱՆ**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IEE0-C5AB-45F4-9E4C հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am